ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.04.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2019/65

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 14.03.2019թ. թիվ 26/26/4088-19 գրությամբ «Մալխասյանց փաստաբանական կենտրոն» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Վանաձորի քաղաքապետարանի 07.03.2019թ. թիվ 061/2325 գրության հիման վրա, 14.03.2019թ. «Մալխասյանց փաստաբանական կենտրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>Վանաձորի քաղաքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Վանաձորի քաղաքապետարանը 07.03.2019թ. թիվ 061/2325 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ, որ Վանաձորի համայնքապետարանի ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ 19/30 ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցի՝ «Մալխասյանց փաստաբանական կենտրոն» ՍՊԸ-ի համար, հրավերով սահմանված կարգով ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ուղարկելուց հետո ստացվել է հարցման պատասխան, որում նշված է, որ «Մալխասյանց փաստաբանական կենտրոն» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հարկային պարտավորություններ, այդ իսկ պատճառով մասնակցի հայտը մերժվել է՝«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն:»:

Վանաձորի քաղաքապետարանը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն քաղաքապետարանի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. **<u>«Մալխասյանց փաստաբանական կենտրոն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Բողոքներ քննող անձը 15.03.2018թ. գրությամբ դիմել է «Մալխասյանց փաստաբանական կենտրոն» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.03.2019թ. թիվ 26/26/4088-19 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ կարծիք չի ներկայացվել:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր «Մալխասյանց փաստաբանական կենտրոն» ՍՊԸ-ի տնօրեն Մինաս Մալխասյանը:

4. ՍՑ-ԷՍ-2019/65 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 14.03.2019թ. թիվ 26/26/4088-19 գրությունը, Վանաձորի քաղաքապետարանի 07.03.2019թ. թիվ 061/2325 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ 19/30 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ 19/30 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 22.02.2019թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 և 28.02.2019թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունները, «Մալխասյանց փաստաբանական կենտրոն» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 27.02.2019թ. տրված եզրակացությունը.

Վանաձորի քաղաքապետարանի կարիքների համար՝ չափագրման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ 19/30 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «Մալխասյանց փաստաբանական կենտրոն» ՍՊԸ-ն:

«Մալխասյանց փաստաբանական կենտրոն» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ 19/30 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

«Մալխասյանց փաստաբանական կենտրոն» ՍՊԸ-ի կողմից առաջարկված գնային առաջարկը կազմել է 950.000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովը 22.02.2019թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության՝

- 5-րդ կետով որոշել է Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած ճանաչել «Մալխասյանց փաստաբանական կենտրոն» ՍՊԸ-ին:

- 6-րդ կետով որոշել ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում կատարել «Մալխասյանց փաստաբանական կենտրոն» ՍՊԸ-ի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա (16.02.2019թ.) դրությամբ հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 27.02.2019թ. տրամադրած եզրակացության համաձայն՝ «Մալխասյանց փաստաբանական կենտրոն» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություն՝ 146.956 ՀՀ դրամ գումարի չափով:

Հանձնաժողովը 28.02.2019թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով որոշել է «Մալխասյանց փաստաբանական կենտրոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել, քանի որ վերջինս հայտը ներկայացնելու օրվա (16.02.2019թ.) դրությամբ ունի հարկային պաարտավորություն:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ «Մալխասյանց փաստաբանական կենտրոն» ՍՊԸ-ի տնօրենը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ պարտավորությունները մարելու նպատակով կատարել է բանկային փոխանցում՝ 250.000 ՀՀ դրամ գումարի չափով:

Բողոքներ քննող անձը «Մալխասյանց փաստաբանական կենտրոն» ՍՊԸ-ից պահանջեց ներկայացնել հայտը ներկայացնելու օրվա (16.02.2019թ.) դրությամբ հարկային պարտավորությունները մարված լինելու փաստը հավաստող վճարման անդորրագիրը:

«Մալխասյանց փաստաբանական կենտրոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացվեց «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի միջոցով կատարված վճարման անդորրագրի պատճենը, թվագրված՝ 20.02.2019թ.:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.

• 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.

• 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

• 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում

հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից.

- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում նույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Վանաձորի քաղաքապետարանի կարիքների համար՝ չափագրման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ 19/30 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

- 7.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում սույն ենթակետում հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին սույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով

Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

• 7.14 կետի համաձայն՝ կոմիտեն հրավերի 1-ին մասի 7.12 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

• 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի

մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

• 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

• 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «Մալխասյանց փաստաբանական կենտրոն» ՍՊԸ-ն ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ 19/30 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել՝ 16.02.2019թ.:

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 27.02.2019թ. տրամադրած եզրակացության համաձայն՝ «Մալխասյանց փաստաբանական կենտրոն» ՍՊԸ-ի Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա (16.02.2019թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գումարը կազմել է 146.956 ՀՀ դրամ:

- «Մալխասյանց փաստաբանական կենտրոն» ՍՊԸ-ն 20.02.2019թ. պարտավորությունները մարելու նպատակով կատարել է բանկային փոխանցում՝ 250.000 ՀՀ դրամ գումարի չափով:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ «Մալխասյանց փաստաբանական կենտրոն» ՍՊԸ-ի կողմից պարտավորությունների մարման գործընթացը իրականացվել է հայտը ներկայացնելուց հետո, հետևաբար հայտը ներկայացնելու օրվա (16.02.2019թ.)

դրությամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ հայտարարելով և հավաստելով, որ բավարարում է ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ 19/30 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, նեկայացրել է իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն, ինչը հանգեցրել է գնման գործընթացին վերջինիս հետագա մասնակցության դադարեցմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Մալխասյանց փաստաբանական կենտրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար առկա են Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.03.2019թ. թիվ 26/26/4088-19 գրությամբ «Մալխասյանց փաստաբանական կենտրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Մալխասյանց փաստաբանական կենտրոն» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ